ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 փետրվարի չորեքշաբթի 2026
տպագրության ԺԵ տարի

14
(3223)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀՐԱԺԱՐՎԵԼ Է ՑՈՒՑՄՈՒՆՔ ՏԱԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն հրաժարվել է ցուցմունք տալ՝ քննիչների հետ հանդիպման ժամանակ օգտվելով իր իրավունքից:

ArmLur.am-ը հայտնել էր, որ Կաթողիկոսին մեղադրանք առաջադրելու գործը հսկող դատախազը Խաչատուր Գալստյանն է, որը նախկինում աշխատել է Քննչական կոմիտեի ՀԿԳ վարչությունում՝ որպես քննիչ: Իսկ ահա քննիչը Քննչական կոմիտեի ՀԿԳ քննիչ Արա Ավագյանն է:

Նշենք, որ փետրվարի 14-ին փաստաբան, Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը հայտնել էր, որ ՀՀ դատախազությունը քրեական հետապնդում է հարուցել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի նկատմամբ. նրա ելքը երկրից արգելվել է:

«Աննախադեպ իրադարձություն է եղել: ՀՀ դատախազությունը քրեական հետապնդում է հարուցել Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ՝ Արման Սարոյանի հետ կապված դատական ակտի կատարմանը խոչընդոտելու մեղադրանքով: Արգելվել է Վեհափառ Հայրապետի ելքը Հայաստանից, ինչով փորձ է արվում ձախողել Ավստրիայում կայանալիք եպիսկոպոսաց ժողովը: Սա պատմական ամոթալի գործողություն է իշխանության կողմից»,- գրել է նա:

Հիշեցնենք՝ քրեական վարույթներ են նախաձեռնվել, եւ Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, Տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը, Տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանը, Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը, Տեր Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանը, Տեր Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը, ինչպես նաեւ Տեր Մովսես քահանա Սահակյանը մեղադրվում են դատական ակտի կատարմանը խոչընդոտելու համար: Ակտը վերաբերում է ՀԱԵ Մասյացոտնի թեմի կարգալույծ հռչակված առաջնորդին՝ Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանին:

⇨ էջ 4

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Ժողովուրդ» օրաթերթի իշխանական աղբյուրների փոխանցմամբ՝ ՔՊ-ում տեղի ունեցած եռօրյա նախընտրական ցուցակի ներքին ընտրությունները վերածվել են իրական քաղաքական փոթորկի՝ բացահայտելով լուրջ լարվածություն իշխանական թիմի ներսում: Ուրբաթից մեկնարկած եւ երեք օր շարունակված գործընթացը, որը պետք է դառնար ձեւական հաստատում, իրականում դարձել է ուժերի վերաբաշխման փաստ: Տասնյակ ՔՊ-ական պատգամավորներ եւ կառավարության անդամներ գրեթե համոզված էին, որ իրենց տեղը երաշխավորված է «ՔՊ 50-յակում»: Սակայն արդյունքները սառը ցնցուղի ազդեցություն են ունեցել շատերի համար: Բացի այդ, գործող բազմաթիվ պատգամավորներ պարզապես դուրս են մնացել մրցակցությունից:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության (ՔՊ) նախընտրական ցուցակում ընդգրկված 50 թեկնածուների համար առաջիկա օրերը լինելու են վճռորոշ եւ թեժ: Մարտի 27-ին եւ 28-ին ՔՊ կենտրոնական գրասենյակում կրկին ընտրություններ են անցկացվելու: Այս անգամ որոշվելու է նախապես ձեւավորված 50-հոգանոց ցուցակի հերթականությունը: Այլ կերպ ասած՝ թեկնածուները ոչ միայն պետք է լինեն ցուցակում, այլեւ պայքարեն իրենց տեղն այդ ցուցակում հնարավորինս բարձր ամրագրելու համար: Մինչ այդ՝ ցուցակում ընդգրկված բոլոր 50 թեկնածուները պետք է ակտիվ քարոզարշավ իրականացնեն տարբեր հարթակներում եւ համայնքներում՝ համոզելու կուսակիցներին իրենց օգտին քվեարկել: Սա ներքին մրցակցություն է, սակայն քաղաքական լարվածությամբ այն չի զիջում արտաքին ընտրապայքարին: Ընտրությունները կտեւեն երկու օր եւ, ինչպես նախորդ անգամ, կհեռարձակվեն ուղիղ եթերով՝ ապահովելով հրապարակայնություն եւ թափանցիկության ցուցադրություն:

Բաքվում դատարանի որոշմամբ՝ Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը 10 տարի կանցկացնի բանտում, եւս 10 տարի՝ խիստ ռեժիմի բանտում: Այս մասին հայտնում է ադրբեջանական ԱՊԱ գործակալությունը: Հիշեցնենք, որ երեկ Արցախի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանը դատապարտվեց 20 տարվա ազատազրկման: Ավելի վաղ դատարանը գնացել էր խորհրդակցության՝ վերջնական որոշում կայացնելու՝ հայտնել էին ադրբեջանական լրատվամիջոցները: Նշենք, որ Ադրբեջանը 2023-ի սեպտեմբերի 27-ին առեւանգել էր Ռուբեն Վարդանյանին Արցախի Հակարիի կամուրջը անցնելիս:Նրա նկատմամբ քրեական գործ է հարուցվել «խաղաղության եւ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, ռազմական հանցագործությունների, նաեւ ահաբեկչության, ահաբեկչության ֆինանսավորման» եւ այլ հոդվածներով:

ԶՐՈՒՅՑ

«ԺՈՂՈՎՈՒՐԴՆ Է ՔՎԵԱՐԿՈՒՄ ԵՎ ՈՐՈՇՈՒՄ»

ՔՊ կենտրոնական գրասենյակում երեք օր շարունակ ընթանում էր ՔՊ նախընտրական ցուցակի ներքին քվեարկությունը, եւ 280 հոգանոց ցուցակից ընդամենը 50-ը ընտրվեցին, որոնք պետք է ներառվեն 2026 թվականի ՔՊ նախընտրական ցուցակում: Այնուհետեւ համագումարի ժամանակ այդ 50 անձանց հերթականությունը կորոշվի:

Այս ամենի մասին զրուցել ենք ՔՊ կուսակցության աշխատակազմի ղեկավար Արույակ Մանավազյանի հետ:

-Տիկին Մանավազյան, կամփոփե՞ք «Քաղաքացիական պայմանագրի» ներկուսակցական ընտրությունների արդյունքները, ըստ որի՝ պետք է դասավորվեր ընտրաթերթիկի առաջին հիսունյակը:

-Թույլ տվեք նախ ասեմ, ներկուսակցական այս ընտրությունները Հայաստանի պատմության մեջ եզակի երեւույթ է այն առումով, որ իսկապես շատ թափանցիկ է կատարվում, եւ բոլոր կուսակցականների եւ հանրության առաջ երեք օր աընդմեջ ուղիղ եթերով տեսել ենք քվեարկության ընթացքը եւ ամփոփումը, թե ինչպես են կազմում կուսակցության 2026 թվականի համապետական ընտրությունների ցուցակը:

Այս ամենը ոչ միայն վերաբերվում է առաջին հիսունյակին, այլեւ ընդհանուր ցուցակին:

Առաջին 50 ընտրված թեկնածուները իրենք կիրականացնեն քարոզարշավ եւ իրենց մեջ եւս քվեարկություն կլինի տեղերի ավելի ճշգրտման, ամրապնդման համար:

Առաջիկայում սկսելու ենք այդ քարոզարշավը, կազմակերպելու ենք դա, նշեմ, որ դա էլի լինելու է հանրությանը հասանելի, տեսանելի:

-Տիկին Մանավազյան, իսկ այն պատգամավորները, որոնք առաջին 50-ի ցանկում չկան, իրենց հետ ի՞նչ է լինելու: Ավելի կմանրամասնե՞ք երկրորդ փուլի պայմանները:

-Երկրորդ փուլով ամրապնդվելու է առաջին 50 տեղերի տեղաբաշխումը, օրինակ՝ 50 համարը երկրորդ փուլի ընտրության ժամանակ պայմանական 35-րդ համար, դա քարոզարշավի արդյունքում եւ ընտրության երկրորդ փուլում է լինելու:

Երբ վարչությունը երկրորդ փուլից հետո վերջնական ցուցակը կկազմի, արդյունքում ապրիլի 4-ին մեր մեծ համաժողովը տեղի կունենա, որտեղ կներկայացնենք համաժողովի հաստատմանը: Ստացվում է՝ համաժողովը իր քվեարկությամբ կազմել է ցուցակը, իսկ հետո մենք ներկայացնում ենք այն հաստատում է: Ավելացնեմ, որ երկրորդ փուլի ընտրությունները լինելու են մարտի 27-ին եւ 28-ին:

-Ըստ Ձեր դիրքի կուսակցությունում, ենթադրվում էր, որ Դուք կանանց քվոտայում պետք է առաջնային դիրքեր զբաղեցնեք, բայց այդպես չստացվեց: Ըստ Ձեզ՝ ո՞րն է պատճառը, որ Ձեզ քիչ են քվեարկել:

-Հստակ չեմ կարող ասել, բայց ենթադրում եմ, որ ավելի ակտիվ են եղել, համացանցում ավելի շատ ակտիվություն են ցուցաբերել, ես հավանաբար քիչ կամ ավելի պակաս ակտիվ եմ եղել: Նաեւ ասեմ, որ շփումը ավելի շատ պետք է լինի, մարզեր այցելելը ավելի հաճախ պետք է լինի, ինչը իմ դեպքում պատգամավորական գործունեության եւ կուսակցության աշխատակազմի կազմակերպչական աշխատանքներով տարված՝ պասիվ եմ արել հավանաբար:

-Տիկին Մանավազյան, հայտարարվել էր, որ Գագիկ Ծառուկյանը պատրաստվում է «Մայր Հայաստան» կուսակցության հետ ստեղծել կուսակցություն եւ մասնակցել խորհրդարանական ընտրություններին, եւ ինքը լինի վարչապետի թեկնածու: Դուք՝ որպես իշխանության ներկայացուցիչ, որքանո՞վ եք այս քայլը համարում խելամիտ եւ արդյոք սա ձեզ մարտահրավեր նետել չէր:

-Քաղաքական դաշտում այժմ բոլորն էլ ակտիվ են, եւ բոլորն էլ կարող են կազմել կոալիցիաներ, ամեն ինչ հնարավոր է տեսնենք մինչեւ հունիս:

Այս ամենի գնահատականը կտա ժողովուրդը իր ընտրությամբ, ես որեւէ բան չեմ բացառում եւ ոչ զարմանում, ես կարծում եմ՝ յուրաքանչյուրը գնում է նման որոշմամբ իր հնարավորությունները չափելով եւ դիտարկելով: Ամեն դեպքում, ժողովուրդն է քվեարկում, եւ նա է որոշում՝ ով է լինելու իշխանությունում:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ԴԱՏԱՐԱՆԸ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՐԵԼ Է

Դատարանը որոշել է պարտավորեցնել Մայր Աթոռին՝ ամբողջությամբ եւ անխոչընդոտ ապահովել հայցվոր Ստեփան Ասատրյանի եւ Արամայիս Թախմազյանի հոգեւոր ծառայությունը:

Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում ասաց կարգալույծ քահանա Արամայիս Թախմազյանը, նախկին Տեր Թադեն:

Հոգեւոր ծառայության պաշտոնում վերականգնումը ապահովելուց բացի՝ Դատարանը Մայր Աթոռին նաեւ պարտավորեցրել է ներկայացնել ապացույցներ, որոնց համաձայն կարգալույծ են ճանաչվել քահանաները:

Հիշեցնենք, որ փետրվարի 5-ին Ստեփան Ասատրյանը եւ Արամայիս Թախմազյանը հայց էին ներկայացրել դատարան՝ ընդդեմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ պահանջելով վերականգնել իրենց հոգեւոր ծառայության պաշտոնը: Հայցը դատարանը հետ էր ուղարկել, ինչին ի պատասխան էլ կարգալույծ քահանաները հայցերը նորից հետ են ուղարկել դատարան:

Հիշեցնենք նաեւ այն, որ եւ Ստեփան Ասատրյանը, եւ Արամայիս Թախմազյանը կարգալույծ էին ծանաչվել եկեղեցական մի շարք կանոններ խախտելու համար:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԿԱՅՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի փոխվարչապետ Մհեր Գրիգորյանն ընդունել է Եվրոպական հանձնաժողովի ընդլայնման եւ արեւելյան հարեւանության հարցերով գլխավոր տնօրինության ղեկավար Գերտ Յան Կուպմանի գլխավորած պատվիրակությանը: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ կառավարությունը:

Հանդիպմանը ներկա են եղել նաեւ Եվրոպական հանձնաժողովի հարեւանության եւ ընդլայնման բանակցությունների հարցերով գլխավոր տնօրինության Արեւելյան հարեւանության եւ ինստիտուտների հզորացման հարցերով տնօրեն Ադրիեն Կիրալին եւ Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Վասիլիս Մարագոսը:

Հանդիպմանը քննարկվել են ՀՀ-ԵՄ գործընկերության ռազմավարական օրակարգի իրագործմանն առնչվող հարցեր, առանձնահատուկ շեշտվել է ՀԸԳՀ լիարժեք կիրարկման կարեւորությունը:

Մհեր Գրիգորյանը եւ Գերտ Յան Կուպմանը մտքեր են փոխանակել նաեւ տարածաշրջանային կապակցվածության ծրագրերի շուրջ, անդրադարձել «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությանը: Զրուցակիցները քննարկել են նաեւ Տնտեսական եւ ներդրումային պլանի ներքո համատեղ կատարված աշխատանքները:

ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսի այցին եւ ՀՀ-ԵՄ գագաթնաժողովին ընդառաջ՝ կողմերը պայմանավորվել են շարունակել աշխատանքները ՀՀ-ԵՄ համագործակցության հնարավոր նոր նախաձեռնությունների սահմանման ուղղությամբ:

ՆՈՐ ՊԱՇՏՈՆ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի՝ 2025թ. դեկտեմբերի եւ 2026թ. հունվար-փետրվարի հրամաններով՝ դատախազությունում տեղի են ունեցել կադրային մի շարք փոփոխություններ:

Արտաշես Մայիլյանը նշանակվել է Սիսիանի կայազորի զինվորական դատախազության դատախազի պաշտոնում: Արտաշես Մայիլյանը Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչ էր, որի անունը հանրությանը հայտնի է Սերժ Սարգսյանի քրեական գործով քննիչ: Նշենք, որ Մայիլյանը ցանկանում էր դառնալ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ, սակայն բացասական բարեվարքության համար չհաղթահարեց մրցույթը, որից հետո դատարանում «կռիվ է տալիս» Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի դեմ: Եւ ահա նախկին քննիչ Մայիլյանը գլխավոր դատախազի կողմից նոր պաշտոնի է նշանակվել դատախազական համակարգում:

Ք. Մ.

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայաստանում ԱՄՆ գործերի ժամանակավոր հավատարմատար Դեյվիդ Ալենը հանդիպել է Հայաստանի պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի հետ: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունը: Նշվում է, որ քննարկվել են հայ-ամերիկյան ռազմական համագործակցության ամրապնդման ուղղությունները: Հիշեցնենք, որ ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսի՝ Հայաստան այցի ժամանակ հայտարարվեց, որ Հայաստանը Միացյալ Նահանգներից 11 միլիոն դոլարի հետախուզական ԱԹՍ-ներ է ձեռք բերել:

ՍԱԿԱԳԻՆԸ ԿԲԱՐՁՐԱՆԱ

«Միանշանակ կարող եմ ասել, որ Հայաստանում էլեկտրաէներգիայի սակագինը ընտրություններից հետո կբարձրանա, եթե հաղթանակ տանի գործող իշխանությունը»,-այս մասին փետրվարի 17-ին՝ լրագրողների հետ հանդիպման ժամանակ, հայտարարել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի նախկին գլխավոր տնօրենի պաշտոնակատար, «Ուժեղ Հայաստան» կուսակցության վարչության անդամ Դավիթ Ղազինյանը: Նրա խոսքով՝ իշխանությունները ՀԱԷԿ-ի (Հայկական ատոմային էլեկտրակայանի) համար նախատեսել են, ինչպես իրենք են հայտարարում, 13 միլիարդ դրամի չափով «այլ ֆինանսական եկամուտներ», սակայն մինչ այժմ չեն պարզաբանել, թե ինչ եկամուտներ են դրանք: «Մենք կասկածներ ունենք, բայց մերկապարանոց հայտարարություններ չենք անելու, թող ասեն՝ ինչքան եւ որտեղից են գումարները ձեռք բերելու: Մենք ունենք հիմնավոր կասկածներ, որ իշխանություններն ամեն ինչ արել են, որպեսզի մինչեւ 2026 թվականի ընտրությունները էլեկտրաէներգիայի սակագինը չբարձրանա»,-նշել է Ղազինյանը: Նա հավելեց, որ իշխանությունները խոսում են կուտակային կայաններ կառուցելու ծրագրերի մասին, եւ եթե դա արվի, ապա արեւային կայանների տեղադրումը կրկնակի կթանկանա: Ղազինյանը նկատել է, որ 2021թ. ընտրություններից հետո իշխանությունները փոխել են իրենց վերաբերմունքը բիզնեսի նկատմամբ, իսկ 2026թ. ընտրություններից հետո իրավիճակն էլ ավելի կվատանա:

900 ՄԻԼԻԱՐԴ ԴՈԼԱՐԻ ԶԵՆՔ

Արտասահմանյան գործընկերների կողմից ամերիկյան զենքի պատվերների ընդհանուր ծավալը հասել է 900 միլիարդ դոլարի, սակայն դաշնակիցներն ստիպված են մի քանի տարի սպասել արդեն վճարված մատակարարումների համար: Այս մասին նշված է USA Today թերթի համար ԱՄՆ պետքարտուղար Մարկո Ռուբիոյի եւ Պենտագոնի ղեկավար Փիթ Հեգսեթի համատեղ հոդվածում:

Հոդվածում նշվում է, որ ԱՄՆ-ին է բաժին ընկնում սպառազինությունների համաշխարհային մատակարարումների 43%-ը: Ընթացիկ պորտֆելը ներառում է ավելի քան 16 000 պատվեր 190 երկրների եւ տարածաշրջանների համար, իսկ դրա ծավալը գերազանցում է 900 միլիարդ դոլարը: Միեւնույն ժամանակ հոդվածում ասվում է, որ ԱՄՆ վարչակազմը ստիպված է եղել բարեփոխել ռազմական պատվերների համակարգը, քանի որ նախորդ ռազմավարությունը դրսեւորել է իր անարդյունավետությունը:

«Ռեկորդային պահանջարկի պահպանումը, արտադրական կարողությունների չափազանց զբաղվածությունը եւ մատակարարումների ժամկետների երկարաձգումը կխաթարեն ԱՄՆ ազգային անվտանգությունը եւ նրա առեւտուրը պաշտպանության ոլորտում: Ամերիկան ամրապնդելու փոխարեն, այդ երկարատեւ ժամկետները մեր դաշնակիցներին դրդում են դիմել այլ մատակարարների, որոնք պնդում են, թե կարող են ապահովել ավելի արագ առաքում, նույնիսկ եթե նրանք առաջարկում են ավելի ցածր որակի արտադրանք», - ասվում է հոդվածում:

Ռուբիոն եւ Հեգսեթը նշում են, որ ԱՄՆ նախագահի ցուցումով պաշտպանական ոլորտն արդեն իսկ վերափոխում է սարքավորումներ ձեռք բերելու եղանակը՝ ներգրավելով կապիտալի նոր աղբյուրներ, կառուցելով ճկունություն մատակարարման շղթաներում:

ԹՐԱՄՓԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՈՉՆՉԱՑՆԵԼ

Իրանի գերագույն առաջնորդ Ալի Խամենեին հայտարարել է, որ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին չի հաջողվի կործանել Իսլամական Հանրապետությունը, ինչպես դա չի հաջողվել նաեւ ԱՄՆ նախկին առաջնորդներին:

«ԱՄՆ նախագահն ասել է, թե Միացյալ Նահանգներն արդեն 47 տարի է, ինչ չի կարողանում կործանել Իսլամական Հանրապետությունը: Սա լավ խոստովանություն է: Ես ասում եմ՝ դու նույնպես չես կարողանա», - ասել է նա IRIB հեռուստաալիքի եթերում՝ Իրանի բնակիչների հետ հանդիպման ժամանակ:

Խամենեին հավելել է, որ նույնիսկ «ամենաուժեղ բանակը», ինչպիսին իրենց համարում են ամերիկացիները, կարող է ստանալ այնպիսի հարված, որից ուշքի չի գա: «Իհարկե, ավիակիրը վտանգավոր զենք է, բայց ավիակրից ավելի վտանգավոր է այն զենքը, որը կարող է այդ ավիակիրն ուղարկել ծովի հատակը», - ընդգծել է նա:

ՄԵՂԱԴՐՈՂ ԴԱՏԱԽԱԶԸ

Ի՞ՆՉ Է ԱՄԵԼ ԿՈՆՋՈՐՅԱՆԻ ԵՂԲԱՅՐԸ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նա երկար տարիներ աշխատել է ինչպես դատախազությունում, այնպես էլ ՀՀ ֆինչական կոմիտեում, սակայն վերջին պաշտոնը եղել է ՀՀ արդարադատության նախարարությունում:

«Ժողովուրդ» օրաթերթը ուսումնասիրել էր Հայկ Կոնջորյանի եղբոր՝ Ավետ Արսենի Կոնջորյանի վերաբերյալ քրեական գործի նյութերը, որոնք հրապարակված են «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում: Գագիկ Մեսրոպյանը մեղադրվում է այն բանում, որ նա, զբաղվելով բնակարանների առքուվաճառքով, Ա.Մկրտչյանի վստահությունը չարաշահելով, բնակարանը վաճառելու պատրվակով նրանից խաբեությամբ մաս-մաս իբր բնակարանի կանխավճար հափշտակել է 6000 ԱՄՆ դոլար գումար, այնուհետեւ տեսնելով, որ Ա.Մկրտչյանը այլեւս իրեն չի վստահում, նախնական համաձայնության գալով Ավետ Կոնջորյանի հետ, 2009թ. սեպտեմբերից հոկտեմբերի կեսերն ընկած ժամանակահատվածում, կրկին չարաշահելով Ա.Մկրտչյանի վստահությունը, խաբեությամբ, մաս-մաս նրանից հափշտակել է 5000 ԱՄՆ դոլար գումար, որից հետո Արտակ Ստեփանյանին Ա.Մկրտչյանին ներկայանցնելով որպես բնակարանի իրական սեփականատեր ոմն Հայկի եղբայր, նրանից խաբեությամբ հափշտակել են եւս 4000 ԱՄՆ դոլար:

Բացի այդ, կրկին 09.09.2009թ. խաբեությամբ Անահիտ Հարությունյանից հափշտակել է առանձնապես խոշոր չափերի հասնող՝ 3.770.500 ՀՀ դրամ գումար: Ավետ Կոնջորյանը մեղադրվում է այն բանում, որ նա, զբաղվելով բնակարանների առքուվաճառքով, խաբեությամբ ուրիշի գույքին տիրանալու շուրջ նախնական համաձայնության գալով Գագիկ Մեսրոպյանի հետ 2009թ. սեպտեմբերից հոկտեմբերի կեսերն ընկած ժամանակահատվածում, Ալվարդ Մկրտչյանի վստահությունը չարաշահելով, հափշտակել է 9000 ԱՄՆ դոլար:

Մինչեւ դատաքննությունը սկսելն ամբաստանյալներ Գագիկ Արղութի Մեսրոպյանը եւ Ավետ Արսենի Կոնջորյանը միջնորդեցին դատաքննությունն անցկացնել արագացված կարգով եւ հայտարարեցին, որ միջնորդությունը ներկայացրել են կամավոր, խորհրդակցել են պաշտպանների հետ, գիտակցում են արագացված կարգով դատաքննություն անցկացնելու հետեւանքները, առաջադրված մեղադրանքն իրենց պարզ են, համաձայն են մեղադրանքի հետ եւ առաջադրված մեղադրանքում իրենց մեղավոր են ճանաչում լիովին: Մեղադրանքը պաշտպանող դատախազ Արսեն Սիմոնյանը, օգտվելով իր դատավարական իրավունքից, դատարանում փոխեց իր՝ նախկինում արագացված դատաքննություն անցկացնելու դեմ առարկելու վերաբերյալ դիրքորոշումը՝ հայտնելով, որ չի առարկում արագացված կարգով դատաքննություն անցկացնելու դեմ:

Ավետ Արսենի Կոնջորյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ եւ նրա նկատմամբ պատիժ նշանակել ազատազրկում 4 /չորս/ տարի ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: Նշված ժամկետում հաշվակցել նրա՝ 26.12.2009թ-ից մինչեւ 17.06.2010թ. կալանավորման մեջ գտնվելու 5 /հինգ/ ամիս 22 /քսաներկու/ օր ժամկետը եւ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում՝ 3 /երեք/ տարի 6 /վեց/ ամիս 8 /ութ/ օր ժամկետով՝ առանց գույքի բռնագրավման: ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել եւ սահմանել փորձաշրջան 3 /երեք/ տարի ժամկետով:

Արդյունքում, դատախազ Սիմոնյանը Կոտայքի մարզի դատարանի որոշումը բողոքարկել է ինչպես ՀՀ վերաքննիչ դատարան, այնպես էլ Վճռաբեկ դատարան, սակայն դատարանները անփոփոխ են թողել առաջին ատյանի դատարանի որոշումը:

Իսկ ո՞վ է մեղադրող դատախազ Արսեն Սիմոնյանը:

2025 թվականի սեպտեմբերի 9-ին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Սրբուհի Գալյանը ստորագրել էր հրաման արդարադատության նախարարության վերահսկողական վարչության պետ Արսեն Սիմոնյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին: Վերջինս 2007-2010թթ. Կոտայքի մարզի դատախազության դատախազն էր եւ ՔՊ Խմբակցության նախագահ Հայկ Կոնջորյանի եղբոր դեմ հարուցված քրեական գործով մեղադրող դատախազն է եղել: Արսեն Սիմոնյանը, ի դեպ, Վերաքննիչ քրեական դատարանի նախկին դատավոր Տիգրան Սիմոնյանի եղբայրն է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՎԵՀԱՓԱՌԻ «ՀԵՌԱՑՄԱՆ» ՊԱՀԱՆՋԸ

«Հայ Առաքելական եկեղեցու բարենորոգում» անվամբ նորահայտ էջը ֆբ-ում արդեն 3000-ից ավելի հետեւորդ ունի:

Սրան զուգահեռ գործում է նաեւ «Բարենորոգում» կայքը, որտեղ միայն Նիկոլ Փաշինյանի պահանջին միացած քաղաքացիներն են:

Կայքից տեղեկանում ենք, որ պահանջին միացել է ընդամենը 685 քաղաքացի:

Եկեղեցու, այսպես կոչված, բարենորոգմանը միացած քաղաքացիները նպատակ ունեն հանգստի կոչելու Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ին՝ կաթողիկոսական տեղապահ ընտրելու եւ նոր կաթողիկոսական ընտրություններ կազմակերպելու:

Վեհափառ Հայրապետին հանգստի կոչելու պահանջին են միացել նաեւ 11 բարձրաստիճան հոգեւորականներ, մի շարք քահանաներ, այդ թվում եւ նախկինում կարգալույծ հռչակված հոգեւորականներ:

Տեղեկացնենք նաեւ այն, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը տիրադավ անվանումը ստացած եպիսկոպոսներին եւս հրավեր է ուղարկել՝ մասնակցելու այս օրերին Ավստրիայում տեղի ունեցող Եկեղեցական ժողովին:

Վեհափառ Հայրապետին հանգստի կոչելու պահանջին միացած բարձրաստիճան հոգեւորականներից միայն մեկը՝ Տեր Հովսան արքեպիսկոպոս Տերտերյանն է ընդունել Մայր Աթոռի հրավերը եւ հաստատել իր մասնակցությունը:

Տեղեկացնենք, որ Եկեղեցական ժողովին քննարկվելու են Հայ Եկեղեցու շուրջ վերջին զարգացումները եւ Եկեղեցու կյանքին առնչվող հարցեր:

Եկեղեցու շուրջ ստեղծված այս իրավիճակին զուգահեռ Մայր Աթոռի բազմաթիվ հոգեւորականներ իրենց որդիական անվերապահ խոնարհությունը ու հավատարմությունն են հայտնել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ նրա գահակալ ազգի Վեհափառ Հայրապետին:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՊԵՏՐՈՍ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԴԵՄ ՀԱՅՑ

«Դատալեքս» համակարգից տեղեկանում ենք, որ Ժուռնալիստների միության նախագահ Սաթիկ Սեյրանյանը հայց է ներկայացրել ընդդեմ Պետրոս Ղազարյանի: Սաթիկ Սեյրանյանը հայցադիմումով պահանջում է դատարանից՝ պարտավորեցնել Պետրոս Ղազարյանին՝ հերքել զրպարտություն հանդիսացող տեղեկությունները:

Հայցադիմումի առիթը եղել է Պետրոս Ղազարյանի ֆեյսբուքյան գրառումը, որում վերջինս նշել էր. «Սոլովյովի սպառնալիքը պաշտպանել են Հայկ Դեմոյանը, Սաթիկ Սեյրանյանը, նրա սանջակ 24 նյուզը, Միկա Բաղալյանը, Անժելա Թովմասյանը, Հրանտ Բագրատյանը: Նրանց մի մասը հարձակվել ա Սոլովյովին քննադատողների վրա:

Վստահ եմ նրանք ուրախ կլինեին, եթե այդ սպառնալիքը իրականանար: Իսկ հիմա նրանք լծվելու են Թրիփի դեմ»:

Հայցվորի դիտարկմամբ՝ այս հայտարարությունները զրպարտություն են, ուստի, Սեյրանյանը պահանջում է պարտավորեցնել Ղազարյանին՝ հերքել զրպարտությունը, ինչպես նաեւ զրպարտության համար փոխհատուցում՝ 1 մլն դրամի չափով:

Հայցը մակագրվել է Երեւանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Երեմ Եսոյանին, դեռեւս առկա չէ որոշում այն վարույթ ընդունելու մասին:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

ՈՎ Է ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԳՈՐԾԸ ՀՍԿՈՂ ԴԱՏԱԽԱԶԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Կաթողիկոսին մեղադրանք առաջադրելու գործը հսկող դատախազը Խաչատուր Գալստյանն է, որը նախկինում աշխատել է Քննչական կոմիտեի ՀԿԳ վարչությունում որպես քննիչ:



Նշենք, որ փետրվարի 14-ին Արա Զոհրաբյանը հայտնել էր, որ ՀՀ դատախազությունը քրեական հետապնդում է հարուցել Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ի նկատմամբ, նրա ելքը երկրից արգելվել է:

«Այսօր աննախադեպ իրադարձություն է եղել: ՀՀ դատախազությունը քրեական հետապնդում է հարուցել Ամենայն Հայոց Կաթողիկոսի նկատմամբ՝ Արման Սարոյանի հետ կապված դատական ակտի կատարմանը խոչընդոտելու մեղադրանքով: Արգելվել է Վեհափառ Հայրապետի ելքը Հայաստանից, ինչով փորձ է արվում ճախողել Ավստրիայում կայանալիք եպիսկոպոսաց ժողովը: Սա պատմական ամոթալի գործողություն է իշխանության կողմից»,- գրել է նա:

Հիշեցնենք՝ քրեական վարույթներ են նախաձեռնվել: Տեր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը, Տեր Հովնան եպիսկոպոս Հակոբյանը, Տեր Մակար եպիսկոպոս Հակոբյանը, Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանը, Տեր Հայկազուն արքեպիսկոպոս Նաջարյանը, Տեր Վահան եպիսկոպոս Հովհաննիսյանը, ինչպես նաեւ Տեր Մովսես քահանա Սահակյանը մեղադրվում են դատական ակտի կատարմանը խոչընդոտելու համար: Ակտը վերաբերում է ՀԱԵ Մասյացոտնի թեմի կարգալույծ հռչակված առաջնորդին՝ Տեր Գեւորգ եպիսկոպոս Սարոյանին:

Նշենք, որ դեռ 2018-ի հոկտեմբերի 15-ին հարուցվեց քրեական գործ՝ Արամի 23 հասցեում գտնվող պատմամշակութային հուշարձան-շենքի վնասման հետ կապված: Նախաքննության ընթացքում տուժող կողմը հիմնավորել է այն հանգամանքը, որ հուշարձան-շենքը քանդվել է ոչ թե անզգուշությամբ, այլ դիտավորության հետեւանքով:

Արդյունքում մեղադրանքներ են առաջադրվել մի շարք անձանց, այդ թվում՝ «Օլդ սիթի» ՓԲԸ տնօրեն Գեւորգ Մաչանյանին: Գործը քննում է Քննչական կոմիտեի ՀԿԳ վարչության ավագ քննիչ Խաչատուր Գալստյանը, որը քննությունը ձգձգեց մոտ 5 տարի, ինչի հետեւանքով մեղավորներն այլեւս պատիժ չեն կրելու, քանի որ վաղեմության ժամկետներն այս ընթացքում անցել են: Իրավասու դատարանների 6 տարբեր դատավոր 6 տարբեր դատական ակտերով արձանագրել են, որ քննիչի այդ որոշումներն ապօրինի են եղել: 2024 թվականի դեկտեմբերին քննիչ Խաչատուր Գալստյանը եւ հսկող դատախազն արդեն 3-րդ անգամ նույն պատճառաբանություններով դադարեցրել են քրեական հետապնդումն «Օլդ սիթի» ՓԲԸ-ի այժմ արդեն նախկին տնօրեն Գեւորգ Մաչանյանի նկատմամբ, ինչը «Հայաստանի փոքրիկ երգիչներ» միջազգային ասոցիացիան կրկին բողոքարկել է: Ընդ որում, ամեն անգամ, երբ դատարանները հստակ արձանագրել են քննության թերությունները, քննիչն ու դատախազը դրանք չեն վերացրել, ավելի շատ քննության պատրանք է ստեղծվել:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԵՂԱԴՐԱՆՔ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ ՊՆ N զորամասի հրամանատարի պաշտոնը զբաղեցրած անձը, դիտավորությամբ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունենալու վիճակ ստեղծելու նպատակով, իրականացրել է իրեն պատկանող այլ անշարժ գույքերի ձեւական օտարումներ եւ խարդախության եղանակով հափշտակել ՊՆ նախարարի հրամանով անհատույց օգտագործման իրավունքով իրեն հանձնված բնակարանը:

Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ ՊՆ պաշտոնատար անձը, մշտապես բնակվելով իրեն եւ կնոջը պատկանող բնակարանում, 2018 թվականի հոկտեմբերի 9-ին ՊՆ կենտրոնական բնակարանային հանձնաժողովին է ներկայացրել բնակելի մակերեսով ապահովվածության վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն, որի հիման վրա հանձնաժողովը Երեւանի հասցեներից մեկի բնակարանն անհատույց սեփականության իրավունքով վերջինիս տրամադրելու հարցին տվել է դրական եզրակացություն:

Արդյունքում՝ 2019 թվականի հուլիսին ՊՆ հաշվեկշռում գտնվող առանձնապես խոշոր չափերի՝ 21.400.000 ՀՀ դրամ արժողությամբ բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրվել է հիշյալ պաշտոնյային:

Վերջինիս մեղադրանք է ներկայացվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված եւ 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին):

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է, եւ վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն դատարան:

ՊԱՀԱՆՋ

Հակակոռուպցիոն դատարանը վարույթ է ընդունել Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հերթական հայցադիմումը:

Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունը պահանջ է ներկայացրել դատարանին՝ Սյունիքի մարզի նախկին մարզպետ, ՀՀ Ազգային Ժողովի նախկին պատգամավոր Վահե Ալբերտի Հակոբյանից եւ նրան փոխկապակցված անձանցից՝ կնոջից՝ Էլիզաբեթ Պետրոսյանից, Վահե Հակոբյանի եղբայր Կարեն Հակոբյանից, Կարեն Հակոբյանի կնոջից, դստերից եւ Վահե Հակոբյանի ծնողներից հօգուտ Հայաստանի Հանրապետության բռնագանձել՝

- 9 անշարժ գույք.
- 3 տրանսպորտային միջոց.
- 1 իրավաբանական անձանցում մասնակցություն.
- 4 փոխառության պահանջի իրավունք՝ ընդհանուր 122 միլիոն 614 հազար դրամի չափով.
- 2 պարտատոմս՝ ընդհանուր 741 հազար ԱՄՆ դոլար արժեքով.
- 2 ավանդ՝ ընդհանուր 240 հազար ԱՄՆ դոլարի չափով.
- 4 միլիարդ 524 միլիոն 816 հազար դրամ՝ որպես ապօրինի դրամական միջոցների մնացորդ.

2 միլիարդ 814 միլիոն 926 հազար դրամ, որը չի հիմնավորվում անձի օրինական եկամուտներով, ունի ապօրինի ծագում, փոխանցվել է բարեխիղճ ձեռքբերողի կամ հնարավոր չէ նույնականացնել եւ բռնագանձել:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՄԱՐԻԽՈՒԱՆԱ

Քրեական ոստիկանության Երեւան քաղաքի վարչության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի բաժնի ծառայողների եւ Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների ստացած եւ մշակած օպերատիվ տեղեկություններն իրացվեցին Արմավիրի մարզի քրեական ոստիկանների եւ պարեկների հետ:

Փետրվարի 7-ին՝ երեկոյան ժամը 8-ի սահմաններում, Էջմիածին-Երեւան ավտոճանապարհին, թմրամիջոց ապօրինի ձեռք բերելու, պահելու եւ իրացնելու կասկածանքով ձերբակալվեց եւ իր վարած «ԲՄՎ» մակնիշի մեքենայով հանդերձ Քրեական ոստիկանության Արմավիրի մարզային վարչություն տեղափոխվեց Աբովյան քաղաքի բնակիչ 34-ամյա մի տղամարդ:

Մեքենան տեղափոխվեց պահպանվող հատուկ տարածք եւ կնիքվեց:

Վաղարշապատի քննչական բաժնում նախաձեռնվեց քրեական վարույթ, եւ հաջորդ օրը կատարված խուզարկությամբ «ԲՄՎ» մակնիշի մեքենայում հայտնաբերվեց մարիխուանայի նմանվող զանգված՝ մեկ կիլոգրամ 148 գրամ քաշով:

Հանգամանքները պարզվում են:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

Նախորդ տարվա դեկտեմբերի 23-ի առավոտյան Ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն էր զանգահարել մայրաքաղաքի Արամ Խաչատրյան փողոցի մի բնակիչ եւ հայտնել, որ գիշերը գողացել են իր ավտոմեքենայի կողային հայելիների ապակիները: Հաղորդումը փոխանցվել էր Համայնքային ոստիկանության Արաբկիրի բաժին, որտեղից էլ դեպքի վայր էր մեկնել օպերատիվ խումբ:

Արաբկիրի քննչական բաժնում նախաձեռնվել էր քրեական վարույթ, կատարվել էին անհրաժեշտ գործողություններ, իսկ համայնքային ոստիկանների օպերատիվ աշխատանքն արդյունք տվեց միայն փետրվարի 10-ին:

Համայնքային ոստիկաններն այդ օրը ստացան տեղեկություն, որ հայելիների գողությունը կատարել է Վաղարշյան փողոցի բնակիչ 31-ամյա մի տղամարդ:

Նույն օրը՝ ժամը 17-ին, Արամ Խաչատրյան փողոցում նա ձերբակալվեց ու տեղափոխվեց Արաբկիրի բաժին: Նրա խուզարկությամբ հայտնաբերվեցին ավտոմեքենայի կողային հայելու զույգ ապակիներ, բջջային երեք հեռախոս եւ գաղտնի փականով դանակ:

Քրեական վարույթի շրջանակում խուզարկություն կատարվեց նաեւ Վաղարշյան փողոցի նրա բնակարանում. հայտնաբերվեցին «Լեքսուս», «Տեսլա» «Ռենո», «Նիսան Ռուժ», «Ջիպ Չերոկի», «Տոյոտա Քեմրի», «Մերսեդես» «Վոլտ», «Հյունդայի Էլանտրա», «Մազդա», «Ֆորդ Ֆյուժն», «Տոյոտա» «Կիա Ֆորտե», «Շեւրոլե Մալիբու» ավտոմեքենաների կողային հայելիների 21 զույգ ապակիներ:

Ձեռնարկվում են միջոցներ՝ մեքենաների տուժած տերերին հայտնաբերելու ուղղությամբ:

31-ամյա տղամարդը կալանավորվել ու տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ: Նախաքննությունը շարունակվում է:

● *Հանրապետությունում փետրվարի 16-ից 17-ը բացահայտվել է 159 հանցագործություն, որոնցից 6-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀԻՄԱ ԷԼ ՀԱՍՑՐԻՆ ՄԱՅԻՍ ԱՄԻՍ

Փետրվարի 11-ին Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել՝նրան մասնավորապես հարցնելով, թե երբ կավարտվի ռազմավարական նշանակություն ունեցող Գանձաքար-Իծաքար ավտոճանապարհի կառուցապատումը: Մարզպետի աշխատակազմից ստացված պատասխանում գրված է. «Գանձաքար-Իծաքար ավտոճանապարհի կառուցապատումն կավարտվի ս/թ մայիսի 1-ին»: Մինչդեռ այդ ճանապարհի կառուցապատման ավարտի այլ ժամկետ է նշել ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը: Ի պատասխան լրագրողական հարցմանս՝ այդ նախարարությունից հայտնել են. ««Հ36, /Մ4/(Իջեւան)-Նավուր-Բերդ-Այգեպար հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ5+600-կմ42+100 հատվածի հիմնանորոգման աշխատանքները մեկնարկել են 2022 թվականին, սակայն որակական եւ ժամկետային պահանջների հետ կապված խնդիրների պատճառով 2023 թվականին կապալառուի հետ կնքված պայմանագիրը միակողմանիորեն լուծվել է: 2024 թվականին իրականացվել է նոր գնման ընթացակարգ, որի արդյունքում հաղթող է ճանաչվել «Էկո Բիլդինգ» ՍՊ ընկերությունը: Աշխատանքների ավարտը նախատեսված էր 2025 թվականի սեպտեմբերին, սակայն կապալառուն չի կարողացել ժամկետում կատարել պարտավորությունները, ինչի պատճառով աշխատանքների կատարման նոր ժամկետ է սահմանվել 2026թ. մարտ ամիսը: Պարտավորությունների չկատարման համար սահմանված կարգով կապալառուից կգանձվեն տույժեր: Մինչ օրս կատարված եւ ընդունված աշխատանքների արժեքը՝2,7 մլրդ դրամ, իսկ 2026թ. իրականացվելիք աշխատանքների արժեքը՝0,3մլրդ դրամ: Կապալառու՝«Էկո Բիլդինգ» ՍՊԸ, պատվիրատու՝ ՀՀ ՏԿԵՆ» : Փաստորեն ՝տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը եւ այդ նախարարության տարածքային ստորաբաժանում հանդիսացող Տավուշի մարզպետի աշխատակազմը հիշյալ ավտոճանապարհի կառուցապատման աշխատանքների ավարտի տարբեր ժամկետներ են նշել: Հավանական է, որ 2026թ. մայիսի 1-ին էլ ավարտված չլինի ճանապարհի կառուցումը, եւ հերթական անգամ ձգձգվի կարեւոր նշանակություն ունեցող ավտոճանապարհի շահագործման հանձնելը:

ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է

Տավուշի մարզի գյուղերի առողջապահական հիմնարկները գործում են Տավուշի մարզպետի աշխատակազմի անմիջական ենթակայությամբ: Փետրվարի 11-ին մարզպետ Հայկ Ղալումյանին հարցում եմ արել գյուղական բժշկական հիմնարկներում առկա թափուր հաստիքների մասին: Մարզպետի աշխատակազմից հայտնել են. «Մարզպետի աշխատակազմի ենթակայության գյուղական բժշկական կազմակերպություններում առկա են 1 ընտանեկան բժշկի (Բագրատաշենի ԳԲԱ) եւ 2 բուժքույրերի (Այգեձորի ԱԿ) թափուր հաստիքներ»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԴԺԳՈՀՈՒԹՅԱՆ ԱԼԻՔ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԻՆ ԷԼ ԵՆ ՔՊ-ՈՒՄ ՄԵՐԺԵԼ

Դեռեւս դեկտեմբերի 29-ին Armlur.am-ը գրել էր, որ ՔՊ թիմում դժգոհության մեծ ալիք է առաջացել Ալեն Սիմոնյանի դեմ:

Բանն այն է, որ ՔՊ վարչության նիստերի ժամանակ, երբ քննարկվել է տարբեր ՔՊ-ականների՝ 2026 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդգրկվելու հարցը, Ալեն Սիմոնյանը գրեթե բոլորի նկատմամբ որդեգրել է շատ ագրեսիվ, հարձակողական դիրք: Իսկ դրա դիմաց ՔՊ նախընտրական ցուցակում կարողացել է «անցկացնել» իր մտերիմներին:

Նշել էինք, որ ՔՊ-ականները վրդովված են այն հանգամանքից, որ Ալեն Սիմոնյանը, «դավեր նյութելով» ուրիշների դեմ, ՔՊ ցուցակում կարողացել է անցկացնել իր «սրտի» ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանին (Զուկ մականունով) եւ իր խորհրդական Աշխեն Հայրապետյանին ցուցակ «տարել»:

Բայց, արի ու տես, որ այսքան պայքարից հետո Սիմոնյանի թիմակիցներին ոչ միայն չի հաջողվել լինել ՔՊ 50-յակում, այլ նաեւ շատ չնչին ձայներ են «հավաքել»:

Ալեն Սիմոնյանի խորհրդական Աշխեն Հայրապետյանը, ով «Ուր որ գնաս, հետդ կգամ» երգի ներքո ամենաակտիվ պարողն էր Նիկոլ Փաշինյանի հետ, ընդամենը 89 քվե է ստացել՝160-րդ տեղում է:

Իսկ ԱԺ աշխատակազմի ղեկավար Դավիթ Առաքելյանը (Զուկ) հավաքել է 142 ձայն, 107-րդ տեղն է զբաղեցնում ցուցակում:

Նշենք, որ Ալեն Սիմոնյանն էլ իր հերթին է շատ քիչ ձայներ հավաքել, չնայած նրան, որ ՔՊ կուսակցության հիմնադիրներից է, ու Սիմոնյանին ընտրողները իր կուսակիցներն էին:

Կարճ ասած, Ալեն Սիմոնյանի նկատմամբ կուսակցությունում վստահություն չկա, ավելին, ԱԺ նախագահի պաշտոնը եւս պատրաստվում են այլ ՔՊ-ականի «տալ»: Այս պահին ամենահավանական թեկնածուն Լիլիթ Մակունցն է:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՄԱՏԵՂ ԶՈՐԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ

Ռուսաստանը, Չինաստանը եւ Իրանը նավեր են ուղարկել՝ մասնակցելու համատեղ զորավարժություններին, որոնք մոտ ժամանակներս անցկացվելու են Հորմուզի նեղուցում: Այդ մասին «Արգումենտի ի ֆակտի» թերթին տված հարցազրույցում հայտնել է ՌԴ նախագահի օգնական Նիկոլայ Պատրուշեւը:

«Հրատապ են «Անվտանգության ծովային գոտի 2026» զորավարժությունները Հորմուզի նեղուցում, ուր իրենց նավերն են ուղարկել Ռուսաստանը, Չինաստանը եւ Իրանը», - ասել է նա:

Ավելի վաղ իրանական Tasnim գործակալությունը հայտնել էր, որ Իրանը, Ռուսաստանը եւ Չինաստանը փետրվարի վերջին Հնդկական օվկիանոսի հյուսիսային մասում կանցկացնեն «Անվտանգության գոտի» անվանումը կրող թվով ութերորդ համատեղ ռազմածովային վարժանքները: Դրանց կմասնակցեն Իրանի ռազմածովային ուժերի, Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսի ռազմածովային ուժերի, ինչպես նաեւ Չինաստանի ու Ռուսաստանի ռազմածովային ուժերի նավերը:

«Անվտանգության գոտի» ռազմածովային զորավարժություններն անցկացվում են 2019 թվականից՝ Իրանի ռազմածովային ուժերի նախաձեռնությամբ: Դրանք ուղղված են համաշխարհային ծովային առեւտրի անվտանգության ամրապնդմանը: Երեք երկրների ռազմածովային ուժերի համատեղ գործողությունները ներառում են ծովահենության դեմ պայքարը, ծովային ահաբեկչությանը հակազդելը եւ փրկարարական գործողությունների անցկացումը:

Փետրվարի 16-ին Իրանն անցկացրել է «Խելացի վերահսկողություն Հորմուզի նեղուցի նկատմամբ» ռազմածովային զորավարժությունները Մերձավոր Արեւելքում լարվածության եւ տարածաշրջանում ԱՄՆ-ի ռազմական ներկայության աճի ֆոնին:

ԼԵՀԱՍՏԱՆԻ ԿՈՉԸ

Լեհաստանի արտաքին գործերի նախարարությունը երկրի քաղաքացիներին խորհուրդ է տվել ձեռնպահ մնալ Ռուսաստան ցանկացած ուղեւորությունից Ուկրաինայում շարունակվող պատերազմի եւ այն բանի պատճառով, որ ՌԴ իշխանությունները Լեհաստանը պաշտոնապես հայտարարել են «ոչ բարեկամական» պետություն: Այդ մասին գրում է Deutsche Welle-ի ռուսական ծառայությունը:

Պաշտոնական հաղորդագրության մեջ, որը փետրվարի 16-ին հրապարակվել է արտաքին քաղաքական գերատեսչության կայքում, ԱԳՆ-ն նաեւ խորհուրդ է տալիս Ռուսաստանում գտնվող Լեհաստանի քաղաքացիներին «լքել ՌԴ տարածքը հասանելի առեւտրային ու մասնավոր միջոցներով, բացառությամբ այն դեպքերի, երբ անձնական, ընտանեկան կամ մասնագիտական հանգամանքները նրանցից պահանջում են մնալ երկրում»:

Փաստաթղթում ընդգծվում է, որ ՌԴ-ում Լեհաստանի քաղաքացիներին հյուպատոսական օգնություն ցուցաբերելու հնարավորությունները գնալով սահմանափակվում են: Սա պայմանավորված է Սանկտ Պետերբուրգում եւ Կալինինգրադում Լեհաստանի գլխավոր հյուպատոսությունները փակելու Ռուսաստանի իշխանությունների որոշումներով, ինչը հանգեցրել է դիվանագիտական եւ հյուպատոսական անձնակազմի թվաքանակի կրճատման:

«Անվտանգության հետ կապված իրադրության կտրուկ վատթարացման, սահմանների փակման կամ այլ անկանխատեսելի հանգամանքների դեպքում տարհանումը կարող է զգալիորեն բարդանալ կամ նույնիսկ անհնար լինել», - նախազգուշացրել է նախարարությունը:

Վարշավան եւ Մոսկվան իրենց հյուպատոսական հաստատությունները սկսել են փոխադարձաբար փակել 2024 թ. աշնանից: Դրանցից վերջինը՝ Գդանսկում ՌԴ հյուպատոսությունը եւ Իրկուտսկում Լեհաստանի հյուպատոսությունը, փակվեցին 2025թ. վերջին: Արդյունքում երկու երկրներն այժմ չունեն գլխավոր հյուպատոսություններ, աշխատում են միայն դեսպանատները մայրաքաղաքներում:

● Փետրվարի 9-ից 16-ը մայրաքաղաքում պարեկները հայտնաբերել են ճանապարհային երթեւեկության կանոնների 4342 խախտում, իսկ մարզերում՝ 13.354 խախտում:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՐՁԱԿՈՒՄ

Փետրվարի 17-ի գիշերը ուկրաինական անօդաչու սարքերը հարձակվել են Կրասնոդարի երկրամասի վրա: Հարվածի տակ է հայտնվել Իլսկի նավթամերամշակման գործարանը (ՆՎԳ), որտեղ հրդեհ է բռնկվել, հայտնել են տարածաշրջանի օպերատիվ շտաբից: «Վնասվել է նավթամթերքի պահեստարանը: Հրդեհի ընդհանուր մակերեսը մոտ 700 քմ է»,-նշել են օպերատիվ շտաբում: Հրդեհաշիջման աշխատանքներում ներգրավվել են 72 մարդ եւ 21 միավոր տեխնիկա, այդ թվում՝ ԱԻՆ մասնագետներ: Բացի այդ, դրոնների բեկորների ընկնելու պատճառով երկու մասնավոր տներ են հրդեհվել Իլսկի ավանում: Տուժել է երկու մարդ, որոնց անհրաժեշտ է եղել հոսպիտալացում: Իլսկի ՆՎԳ-ն խոշորագույններից մեկն է երկրում, այն գտվում է Ռուսաստանի հարավում: Ձեռնարկությունը պատկանում է «Կուբանի նավթագազային ընկերությանը»: Այն ներառում է վեց տեխնոլոգիական կայանք՝ տարեկան 6,6 մլն տոննա ընդհանուր հզորությամբ: Ուկրաինայի ԶՈՒ Գլխավոր շտաբում նշել են, որ տվյալ ՆՎԳ-ն «ներգրավված է Ռուսաստանի զինված ուժերի ապահովման գործում»: Մինչ այս, գործարանը բազմիցս դարձել է Ուկրաինայի թիրախը, սակայն այս տարի սա առաջին հարձակումն է եղել դրա վրա: Կրասնոդարի երկրամասի վրա հարձակմանը զուգահեռ ուկրաինական դրոնները գրոհել են Թաթարստանը: Գիշերը՝ ժամը երեքի սահմաններում, պայթյուններ են հնչել Կազանում եւ Նիժնեկամսկում, գրում է Shot-ը: Տեղի բնակիչները հայտնել են, որ դրանից հետո շրջաններից մեկում լույսը «տատանվել է»: Մինչ այդ «Ռոսավիացիան» հայտարարել էր Կազանի եւ Նիժնեկամսկի օդանավակայանների ժամանակավոր փակման մասին: Թաթարստանին հասցված հարվածների հետեւանքների մասին պաշտոնական տեղեկատվություն իշխանությունները չեն տրամադրել: Նաեւ ժամը հինգի սահմաններում պայթյունների շարք է հնչել Իժեւսկի վրա: Ուդմուրտիայի ղեկավար Ալեքսանդր Բրեչալովը հայտնել է դպրոցներում պարապմունքների դադարեցման մասին: Բացի այդ, ուկրաինական անօդաչուները հարձակվել են օկուպացված Սեւաստոպոլի վրա: Ռուսաստանի կողմից նշանակված քաղաքապետ Միխայիլ Ռազվոժաեւի խոսքով՝դա վերջին շրջանի «ամենաերկարատեւ հարձակումներից մեկն էր»: Հարձակման հետեւանքով վիրավորում է ստացել 9-ամյա տղա, նրան տեղափոխել են մանկական հիվանդանոց: ՌԴ Պաշտպանության նախարարության ամփոփագրի համաձայն՝ անցած գիշեր հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) հերթապահ միջոցներով «ոչնչացվել եւ որսվել է» ինքնաթիռային տիպի 151 ուկրաինական անօդաչու սարք: Ամենաշատը՝ 50 հատ՝ Սեւ ծովի ջրատարածքի վրա, ինչպես նաեւ 38-ը՝ օկուպացված Ղրիմի տարածքի եւ 29-ը՝ Ազովի ծովի վրա: Եւս 18-ը խոցվել են Կրասնոդարի երկրամասի վրա, 11-ը՝ Կալուգայի մարզի, չորսը՝ Բրյանսկի եւ մեկը՝ Կուրսկի մարզի վրա:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Աննա Վաղարշակի Բաղդասարյանի դիպլոմը՝ տրված Երեւանի բազային N 1 բժշկական ուսումնարանի կողմից 1993թ.-ին: Մասնագիտությունը «Քույրական գործ»:

Տրված CT-I 259260 N 259260 դիպլոմը, գրանցման N 448: Համարել անվավեր:

ՎՏԲ ՀԱՅԱՍՏԱՆ

ՎԵՐԱԲԱՑՎԵԼ Է ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

Աշտարակ քաղաքում վերաբացվեց ՎՏԲ-Հայաստան Բանկի վերանորոգված «Աշտարակ» մասնաճյուղը: Պաշտոնական բացման արարողությանը ներկա էին Բանկի ղեկավարությունը, գործընկերներ, հաճախորդներ եւ ՏԻՄ ներկայացուցիչներ: Վերանորոգված մասնաճյուղը նախատեսված է ավելի քան 8 հազ. հաճախորդների սպասարկման համար: Մասնաճյուղում գործում է նաեւ անհատական սպասարկման «Պրիվիլեգիա» գոտի՝ ոլորտում փաթեթի օգտատերերի համար:

«Աշտարակ» մասնաճյուղը գործում է Բանկի հիմնադրման օրերից եւ հանդիսանում է ՎՏԲ -Հայաստան Բանկի ներկայության առանցքային օղակ ինչպես քաղաքի, այնպես էլ մարզի մասշտաբով: Վերանորոգման շրջանակներում ամբողջությամբ նորացված է մասնաճյուղի դիզայնը, իսկ տարածքը կազմակերպված է արդի բանկային սպասարկման ստանդարտներին համապատասխան. նախապես մտածված գոտեւորումը եւ աշխատատեղերի հարմար դասավորվածությունն ապահովում են հարմարավետություն՝ հաճախորդների սպասարկման բոլոր փուլերում:

«Մենք արդիականացրել ենք Բանկի ամենապահանջված մասնաճյուղերից մեկը՝ «Աշտարակ» մասնաճյուղը՝ բարձրակարգ սպասարկման շրջանակում հաճախորդներին ժամանակակից եւ հարմար միջավայր ապահովելու նպատակով: Սա մեզ համար ստրատեգիկ նշանակություն ունեցող մասնաճյուղ է, եւ մենք բարձր ենք գնահատում մեր հաճախորդների վստահությունն ու լոյալությունը, ինչին ի պատասխան՝ մշտապես զարգանում ենք եւ բարձրացնում աշխատանքի որակը: Այստեղ հաճախորդները ստանում են համալիր բանկային սպասարկում՝ ներառյալ անհատական մոտեցում եւ պրեմիում ծառայություններ «Պրիվիլեգիա» գոտում»,- մեկնաբանել է ՎՏԲ-Հայաստան Բանկի Գլխավոր տնօրենի - Տնօրինության նախագահի տեղակալ Տարաս Կլադչենկոն:

Մասնաճյուղը սպասարկում է ավելի քան 8 հազ. հաճախորդների, այդ թվում՝ իրավաբանական անձանց: Նրանց հասանելի է բանկային ծառայությունների ամբողջական փաթեթ՝ հաշվարկադրամարկղային սպասարկում, վարկային եւ խնայողական պրոդուկտներ, վճարային քարտերի ձեւակերպում: «Պրիվիլեգիա» փաթեթի օգտատերերի համար նախատեսված է առանձնացված սպասարկման գոտի՝ անհատական սպասարկմամբ եւ բարելավված պայմաններով:

Մասնաճյուղի մուտքի մոտ հաճախորդներին հասանելի է 24/7 ռեժիմով ինքնասպասարկման գոտի, իսկ ներսում տեղադրված են վճարային տերմինալներ, որոնց միջոցով հնարավոր է կատարել ավելի քան 300 բանկային գործառնություն՝ առանց պլաստիկ քարտի կիրառման:

«Աշտարակ» մասնաճյուղը գործում է ք. Աշտարակ՝ Վարդգես Պետրոսյան 18 հասցեում: Այն աշխատում է աշխատանքային օրերին 09:30-17:00, իսկ շաբաթ օրերին՝ 10:00-14:00:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

600 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Ֆասթ Բանկն ամփոփել է 2025 թվականի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) շրջանակներում իրականացրած նախագծերը: Անցնող տարվա ընթացքում Ֆասթ Բանկը 600 միլիոն դրամից ավելի աջակցություն է տրամադրել բազմաթիվ նախաձեռնությունների, այդ թվում՝ առողջապահական, գիտական, մշակութային, կրթական, երիտասարդական եւ համայնքային զարգացման կարեւոր ծրագրերի:

Ֆասթ Բանկն անցնող տարվա ընթացքում մեծ ներդրումներ է կատարել արվեստի եւ մշակույթի ոլորտում, հովանավորել է «Արթուր Գրիգորյան. սիմֆոնիկ մեղեդիներ» համերգը, «Հուսո առագաստ» հեղինակային երգի միջազգային փառատոնի նախընտրական ու եզրափակիչ փուլերն ու նրանց բարեգործական համերգները, միջոցներ են տրամադրվել նաեւ ժամանակակից արվեստի եւ երիտասարդական ստեղծարարական նախագծերի:

Նշանակալի էր Ֆասթ Բանկի աջակցությունը Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին՝ Մատենադարանին. ազգային մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված իր հանձնառության շրջանակում Բանկը 50 միլիոն դրամի աջակցություն է տրամադրել Մատենադարանին: Բանկի աջակցությամբ Մատենադարանի նոր տարածքը կունենա առանձին ելք, կվերանորոգվեն դարպասներն ու մուտքի դռները: Աշակերտական խմբերի համար կստեղծվի առանձին մուտք՝ համապատասխան բոլոր ժամանակակից պայմաններին, իսկ նկուղային հարկում կառուցվում է սրճարանային տարածք եւ հուշանվերների խանութ:

Առանձնահատուկ ուշադրություն է ցուցաբերվել կրթական ու գիտական ոլորտի նախագծերին. Բանկը ֆինանսավորել է «Գաղտնագրություն, վիճակագրություն եւ մեքենայական ուսուցում» ամառային դպրոցը, «Փոխակերպվող տնտեսություն» միջազգային գիտաժողովը, Yerevan Dialogue 2025 միջազգային համաժողովը, ինչպես նաեւ Ազգային երիտասարդական երկրորդ համաժողովը: Այս նախաձեռնությունները նպաստել են երիտասարդական ներուժի ու գիտելիքի զարգացմանը եւ միջազգային գիտակրթական կապերի ամրապնդմանը:

Ֆասթ Բանկի հովանավորությամբ մայրաքաղաքի սրտում՝ Ազատության հրապարակում, իրականացվել է միջազգային մակարդակի սպորտային միջոցառում՝ Les Mills Experience Yerevan-ը: Բացօթյա մարզումներն ուղեկցվել են երաժշտությամբ եւ առողջ կենսակերպը խրախուսող ակտիվություններով:

Առողջապահական եւ մասնագիտական համայնքին վերաբերող ծրագրերից առանձնացել է Բժշկական ասոցիացիաների եվրոպական ֆորումի 39-րդ նստաշրջանի հովանավորությունը, ֆինանսական աջակցություն է ցուցաբերվել «Եղջերաթաղանթի եւ արտաքին աչքի հիվանդությունների» բժշկական ատլասի հրատարակության համար:

Ֆասթ Բանկն ուշադրության կենտրոնում է պահել նաեւ մշակութային ժառանգության պահպանման եւ ենթակառուցվածքների բարելավման խնդիրները. Բանկի աջակցությամբ շարունակվել են վերանորոգվել մշակութային վայրերի, հատկապես թատրոնների ենթակառուցվածքները:

Ֆասթ Բանկը շարունակել է աջակցել նաեւ «Մաքուր հայրենիք» նախաձեռնությանը, որն արդեն 3-րդ տարին է՝ համախմբում է հայտնիներին եւ հասարակությանը մաքուր հայրենիքի գաղափարի շուրջ:

Բանկը շարունակել է ուշադրության կենտրոնում պահել նաեւ հասարակական եւ համայնքային ծրագրերը: Հիշարժան էր տարեվերջին՝ դեկտեմբերի 31-ի գիշերը, Հանրապետության հրապարակում անցկացված յուրահատուկ դրոն շոուն, որը Ֆասթ Բանկի աջակցությամբ վերածվել է ֆանտաստիկ տեսարանային ներկայացման՝ միավորելով հազարավոր քաղաքացիների:

Ֆասթ Բանկի 2025 թվականը գործունեության բազմաշերտ, ընդգրկուն եւ մարդկանց իրական կարիքներին արձագանքող տարի էր: Բանկը հավատարիմ է մնացել իր առաքելությանը՝ տարեցտարի ընդլայնելով բարեգործական եւ հովանավորչական ծրագրերի ծավալը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՄԱՐԻԱ ԿԱԼԼԱՍ

«2025 ԹՎԱԿԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՐՄՆԱՆԿԱՐԸ»

Հունաստանի Կալամատա քաղաքում Մարիա Կալլասի հսկա որմնանկարը ճանաչվել է «2025 թվականի լավագույն որմնանկար»:

Ինչպես տեղեկանում ենք Ewronews-ից, Հունաստանի Պելոպոնեսի երկրորդ ամենամեծ քաղաքում՝ Կալամատա քաղաքում, բացվել է համաշխարհային մակարդակի տեսարժան վայր: Քաղաքի կենտրոնական շենքերից մեկի վրա գտնվող լեգենդար օպերային դիվա Մարիա Կալլասի որմնանկարը ճանաչվել է «2025 թվականի լավագույն որմնանկար»՝ ըստ Street Art Cities-ի՝ փողոցային արվեստին նվիրված համաշխարհային հարթակի:

Դրա ստեղծողը՝նկարիչ Կլեոմենիս Կոստոպուլոսը, ասել է, որ աշխատանքը պետք է տեւեր մոտ երկու շաբաթ, սակայն վատ եղանակի պատճառով այն ձգձգվել է մեկ ամիս: Նա օգտագործել է հատուկ վրձիններ, ներկերի լակի եւ կռունկ՝որմնանկարը ստեղծելու համար:

«Մարիա Կալլասի հայրը Մեսինյան շրջանից էր, ինչն էլ ինձ ոգեշնչեց պատկերել նրան որպես Կալամատա: Որմնանկարը իրականում կոչվում է «Կալամատա», այլ ոչ թե «Մարիա Կալլաս»: Իմ մտադրությունն էր այլաբանորեն պատկերել քաղաքը»,-ասել է նա:

Նկարչի խոսքով՝ օպերային դիվայի անհատականությունից բացի, հատուկ ուշադրություն պետք է դարձնել նրա զգեստին, որը, նրա խոսքերով, ներկայացնում է «այս օրհնված երկրի՝Մեսինիա շրջանի բնական առատությունը»: Որմնանկարը նաեւ կապված է Կալամատայի մինչեւ 2030 թվականը կլիմայական չեզոք քաղաք դառնալու հավակնոտ նպատակի հետ:

Տեղական իշխանությունները ողջունում են նոր որմնանկարի դերը քաղաքը որպես զբոսաշրջային վայր խթանելու գործում:

«Մենք որմնանկարը համարում ենք նոր տեսարժան վայր: Այն արդեն դարձել է տեսարժան վայր: Մարդիկ գալիս են եւ լուսանկարվում դրա ֆոնի վրա: Նրանք պլանավորում են այցելել Կալամատա եւ գովազդել այն սոցիալական ցանցերում: «Կալամատա» եւ «Մարիա Կալլաս» հեշթեգերը ներկայումս ակտիվորեն գովազդվում եւ տարածվում են»,-ասել է Վասիլիս Պապաֆստաթիուն՝Կալամատա քաղաքի փոխքաղաքապետ ռազմավարական պլանավորման եւ կլիմայական չեզոքության հարցերով:

Նախագիծը կապված է նաեւ Կալամատայի՝ մինչեւ 2030 թվականը կլիմայական չեզոք քաղաք դառնալու նպատակի հետ: Մասնագետները նշում են, որ որմնանկարի եւ այս նպատակի միջեւ կապը կարող է անմիջապես ակնհայտ չլինել, բայց այն պարզ է դառնում, երբ դիտարկվում է որպես հաղորդակցության եւ իրազեկվածության բարձրացման միջոց: Ըստ էության, Մարիա Կալլասի պատկերը ծառայում է որպես տեղեկատվության աղբյուր եւ ոգեշնչում է վարքային փոփոխություններ՝ կոչ անելով առօրյա կյանքում ավելի կայուն գործելակերպի: Ընդհանուր առմամբ, որմնանկարը ո՛չ նվազեցնում է, ո՛չ էլ ավելացնում արտանետումները, այլ ընդհակառակը, ամրապնդում է սոցիալական նվիրվածությունը, որը կարեւոր է կլիմայական նպատակին հասնելու համար:

Կլեոմենիս Կոստոպուլոսը հույս ունի, որ որմնանկարը կփոխի նաեւ իր կյանքը: Փորձառու նկարիչը հիացած է «Փողոցային արվեստի քաղաքներ» մրցանակով եւ ասում է, որ իր հետ արդեն կապ են հաստատել մի քանի քաղաքապետարաններ եւ այլ կազմակերպություններ՝ հնարավոր համագործակցությունների վերաբերյալ:

ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ՇԱՆՍՈՆԻ ՇՈՒՆՉԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Երեւանում Արամ Խաչատրյանի անվան համերգասրահում տեղի է ունեցել ֆրանսիացի երգիչ Տիտիանոյի համերգը՝ «Une vie d'amour» խորագրի ներքո:

Երեկոն կայացել է Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի մասնակցությամբ, որը ղեկավարում էր Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստ, դիրիժոր Երվանդ Երզնկյանը:

Համերգային ծրագիրը նվիրված էր ֆրանսիական շանսոնի մեծագույն ներկայացուցիչ Շառլ Ազնավուրի ստեղծագործական ժառանգությանը:

Տիտիանոյի կատարումներն առանձնանում էին խորը զգացմունքայնությամբ եւ երաժշտական նրբազգացությամբ: Հատկանշական էր երգչի ձայնային տեմբրի բացառիկ նմանությունը Շառլ Ազնավուրի տեմբրին:

Համերգի ընթացքում բազմաթիվ ներկաներ նշում էին, որ աչքերը փակելիս ստեղծվում էր այնպիսի տպավորություն, կարծես լսում են հենց Ազնավուրի կենդանի կատարումը:

Երեկոյի ընթացքում հանդիսատեսի համար հաճելի անակնկալ է դարձել նաեւ այն, որ Տիտիանոն հանդես է եկել հայկական երգի կատարմամբ՝ արժանանալով դահլիճի ջերմ ու հուզական արձագանքին:

Երգիչը բազմիցս ընդգծել է իր խորը հիացմունքը Հայաստանի, հայ ժողովրդի եւ հայկական մշակույթի հանդեպ՝ նշելով, որ Ազնավուրի երգերի զգացմունքային խորությունը լիարժեք զգալու համար անհրաժեշտ է լինել հայերի կողքին, շնչել նույն մշակութային միջավայրը եւ կիսել նույն հոգեւոր զգացողությունները:

Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի սիմֆոնիկ հնչողությունը համերգին հաղորդել էր ամբողջականություն եւ բարձր գեղարվեստական որակ:

Նվագախմբի եւ մեներգչի համագործակցությունը աչքի էր ընկնում երաժշտական զգայուն համադրմամբ եւ պրոֆեսիոնալ բարձր մակարդակով:

«Une vie d'amour» համերգը դարձավ երեւանյան նշանակալի մշակութային իրադարձություն՝ եւս մեկ անգամ ընդգծելով Շառլ Ազնավուրի ստեղծագործական ժառանգության անժամանցելիությունը եւ դրա արժանապատիվ շարունակական ներկայությունը ժամանակակից երաժշտական բեմում:

Համերգը մեծ արձագանք է գտել հանդիսատեսի շրջանում՝ ուղեկցվելով երկարատեւ ծափահարություններով:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄՈՈՒՐԻՆՅՈՆ ՌԵԱԼԻ ՄԱՍԻՆ

Չեմպիոնների լիգայի փլեյ-օֆֆից առաջ Լիսաբոնի «Բենֆիկայի» պորտուգալացի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոն խոսել է արքայական ակումբում անցկացրած տարիների մասին: Փլեյ-օֆֆում «Բենֆիկայի» մրցակիցը կլինի «Ռեալը»:

«Ես տվել եմ «Ռեալին» այն ամենը, ինչ ունեցել եմ այն ժամանակ: Ինչ-որ բան լավ եմ արել, ինչ-որ բան վատ է ստացվել, բայց ես առավելագույնն եմ տվել, եւ մարդիկ դրա համար հարգում են ինձ: «Ռեալի» հետ ոչ մի առնչություն հիմա չունեմ: Ես շատ կցանկանայի «Ռեալին» դուրս թողնել Չեմպիոնների լիգայից, նաեւ այն պատճառով, որ Արբելոան հաղթի Լա Լիգայում եւ երկար մնա ակումբում: Նա գերազանց տղա է եւ արժանի է դրան»,- Մոուրինյոյի խոսքը մեջբերում է AS-ը:

«Բենֆիկա» - «Ռեալ» առաջին հանդիպումը տեղի է ունեցել երեկ՝ փետրվարի 17-ին:

ՄԲԱՊԵՆ ՍԿՍԵԼ Է ՄԱՐԶՈՒՄՆԵՐԸ

Մադրիդի «Ռեալի» ֆրանսիացի հարձակվող Կիլիան Մբապեն վերսկսել է մարզումները արքայական թիմի ընդհանուր խմբում, հաղորդում է Marca-ն:

27-ամյա ֆուտբոլիստը բաց էր թողել «Ռեալ Սոսիեդադի» դեմ Իսպանիայի առաջնության 24-րդ տուրի հանդիպումը ծնկի ցավերի պատճառով:

«Ռեալը» պատրաստվում է պորտուգալական «Բենֆիկայի» դեմ Չեմպիոնների լիգայի անցումային փլեյ-օֆֆի առաջին խաղին, որը տեղի կունենա փետրվարի 17-ին Լիսաբոնում:

Ընթացիկ մրցաշրջանում Մբապեն «Ռեալի» կազմում մասնակցել է 31 հանդիպման, խփել է 38 գոլ, կատարել 5 գոլային փոխանցում:

ԾԱՆՐԱՄԱՐՏ

Հայաստանի ծանրամարտի տղամարդկանց հավաքականի գլխավոր մարզիչ Հակոբ Փիլոսյանը ներքին առաջնությունը կարեւոր նախապատրաստական փուլ է համարում ընթացիկ տարվա հիմնական մրցաշարերից առաջ:

«Կարեւոր է, որ այս առաջնությունն ավարտեցինք առանց վնասվածքների: Ունեցանք Հայաստանի աննախադեպ առաջնություն: Այս արդյունքները նորմալ են, քանի որ դեռեւս տարվա սկիզբն է, ու միայն երկու ուսումնամարզական հավաք ենք անցկացրել»,-Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Հակոբ Փիլոսյանի խոսքերը փոխանցում է ֆեդերացիայի մամուլի ծառայությունը:

Ըստ մասնագետի՝ Հայաստանի առաջնության մասնակից երիտասարդ մարզիկները խոստումնալից են, իսկ նրանց գրանցած քաշերը՝գոհացնող:

«Հայաստանի այս առաջնությունը կազմակերպչական առումով նման էր Եվրոպայի առաջնությանը: Հուզմունքը կար տղաների մոտ, ու նմանատիպ մրցաշարեր շատ են պետք, որ պատրաստ լինենք 2027 թվականին Երեւանում կայանալիք աշխարհի առաջնությանը»,-ասել է մասնագետը:

● *Փետրվարի 18-ին՝ժամը19:00-ին, Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Սիրային իրարանցում» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՏՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ, թե որքան եմ պարտք բանկին, բայց ինձ ուղղորդում են իրավաբանների մոտ: Ի՞նչ կարող եմ անել:

Ռուզաննա Ահարոնյան, 29 տարեկան



ՊԱՏԱՍԽԱՆ. Նման դեպքում կարող եք հետեւել բանկի տվյալ աշխատակցի ուղղորդմանը եւ այցելել այն բանկ, որտեղ առկա են Ձեր պարտավորությունների վերաբերյալ ամբողջական տվյալներ: Եթե բանկից առհասարակ հրաժարվում են Ձեր պարտավորությունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել, ապա կարող եք ձեռնարկել հետեւյալ քայլերից որեւէ մեկը.

-Դիմել Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ՝ներկայացնելով Ձեր խնդիրը բանկի հետ, եւ խնդրել նրանց միջամտությունը: Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի ծառայություններն անվճար են:

-Այցելել «ԱՌՔԱ» վարկային բյուրոյի կայքը եւ գրանցվել կայքում: Կայքում գրանցվելուց հետո Դուք հնարավորություն կստանաք ցանկացած պահի մուտք գործել կայքում բացված Ձեր անձնական էջ եւ ստանալ ամբողջական տեղեկատվություն Ձեր վարկային պատմության վերաբերյալ:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացու՝ բանկի նկատմամբ ունեցած ֆինանսական պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը կարող է հասանելի լինել ոչ բոլոր մասնաճյուղերում կամ ոչ բոլոր մասնաճյուղերի աշխատակիցները կարող են հասանելիություն ունենալ տվյալների այդ բազային, այդ պատճառով բանկի տվյալ մասնաճյուղի աշխատակիցը կարող է Ձեզ ուղղորդել այն մասնաճյուղ կամ այն աշխատակցի մոտ, որը տիրապետում է այդ տեղեկություններին կամ հասանելիություն ունի տվյալների համակարգին:

Էջը՝ ԳՐԵՏԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Գործատուս պահանջում է ազատվելու դիմում գրել ու չի թողնում, որ աշխատեմ. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Վահագն Վարդանյան, 21 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե գործատուն առանց պատճառաբանության ցանկանում է ազատել Ձեզ աշխատանքից, իսկ Դուք չեք ցանկանում, ապա աշխատանքից ազատվելու դիմում չգրելը Ձեր իրավունքն է, եւ գործատուն իրավունք չունի հարկադրելու Ձեզ ազատվել աշխատանքից: Եւ եթե ցանկանում է ազատել Ձեզ աշխատանքից իր նախաձեռնությամբ, ապա օրենքը հստակ սահմանում է այդ դեպքերի սպառիչ ցանկը, որոնց դեպքում գործատուն պետք է նախապես ծանուցի աշխատողին կամ գրավոր բացատրություն վերցնի աշխատողից, երբ ցանկանում է աշխատողին ազատել աշխատանքից ինչ-որ խախտումների պատճառով: Իսկ այն դեպքում, երբ գործատուն արգելում է Ձեզ ներկայանալ աշխատանքի եւ կատարել Ձեր աշխատանքային պարտականությունները, ապա Դուք իրավունք ունեք պահանջել գործատուից վճարել Ձեզ այն օրերի համար, որոնց ժամանակ Դուք չեք կարողացել աշխատել, ինչպես նաեւ պահանջել վճարել Ձեզ պատճառված վնասները:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Պետք է նկատի ունենալ, որ նման իրավիճակում պետք է ինքներդ Ձեզ ապահովագրեք հնարավոր բացասական իրավիճակներից, երբ, օրինակ, գործատուն կփորձի Ձեր՝ աշխատանքի չներկայանալը ներկայացնել որպես պատճառ Ձեզ աշխատանքից ազատելու համար: Դա կանխելու համար անհրաժեշտ է հնարավորինս շուտ գործատուին ուղարկել դիմում, որով կխնդրեք պարզաբանել, թե ինչու նա չի թույլատրում աշխատանքի ներկայանալ, արդյոք նա ազատել Ձեզ աշխատանքից, թե ոչ: Դիմումը անհրաժեշտ է ուղարկել փոստային ծառայությամբ՝ հետադարձ ծանուցմամբ, որպեսզի հետագայում կարողանաք հիմնավորել, որ Ձեր դիմումը գործատուն ստացել է: Այս քայլը Ձեզ հնարավորություն կտա հետագայում, երբ վեճ առաջանա Ձեր եւ գործատուի միջեւ, փաստաթղթային տարբերակով հիմնավորել եւ ապացուցել, որ հենց գործատուն է խոչընդոտել Ձեր՝ աշխատանքի ներկայանալուն:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը armenpress-ից

Լույս է տեսել «Մշակույթների հանդիպում» գիրքը՝ միտված խթանելու հայ եւ հույն ժողովուրդների փոխըմբռնումն ու համագործակցությունը, ներառում է առակախոս Եզոպոսի չորս առակ՝ հունարեն, հայերեն եւ ռուսերեն թարգմանություններով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 4 + 1 + 6 + 10
	Կոտայքի լեռներ	0 - 3 + 6 + 9
	Կոտայքի նախալեռներ	+ 1 + 4 +10 +13
	Գեղարքունիք	- 3 + 2 + 6 + 10
	Լոռի	+ 2 + 6 + 14 + 19
	Տավուշ	+ 1 + 5 +14 + 18
	Արագածոտնի լեռներ	- 1 - 4 + 5 + 8
	Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 5 + 10 + 15

	Արարատ	+ 3 + 5 +15 + 17
	Արմավիր	+ 1 + 5 +16 + 18
	Վայոց ձորի լեռներ	0 - 3 + 7 + 10
	Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 6 +15 + 18
	Սյունիքի լեռներ	0 - 3 + 6 + 9
	Սյունիքի նախալեռներ	+ 1 + 6 +17 + 21
	Սյունիքի հովիտներ	+ 5 + 10 +19 + 24
	Երեւան	+ 3 + 5 + 15 + 17

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **17.02.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*